ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Նիստի անցկացման՝
-վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1, 309 սենյակ.
-օրը՝ 10.02.2022թ, ժամը՝ 15:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝	Է. Ամիրաղյան
Հանձնաժողովի անդամներ՝	Ա. Այդինյան , Բ. Արզումանյան, Ա.Շաբոյան, Պ.Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ս. Խաչատրյան

Պարզաբանման վերաբերյալ

Ընդունել ի գիտություն, որ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/6 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ ստացվել է պարզաբանման հարցում.

Հարցադրում N 1

Խնդրում ենք տրամադրել տեխնիկական պարամետրեր , քանի որ ըստ ԳՕՍՏ-ի չափիչ սարքեր շատ կան:

Հարցադրում N 2

1. Հրավերում նշված տեխնիկական բնութագիրը բավարար չէ ապրանքի նույնականացման համար: Ուստի խնդրում ենք նշել պահանջվող սարքի հատկանիշները (սարքի կիրառման ոլորտը, չափման միջակայքը, ճշգրտության դասը և այլն):
2. Պայմանագրի նախագծի գնման ժամանակացույցի համաձայն մատակարարը պարտավոր է մատակարարել ապրանք պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 21 օրացուցային օրվա ընթացքում, սակայն ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/6 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարված է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառմամբ: Խնդրում ենք պարզաբանել սույն կետը:

Գնահատող հանձնաժողովի կողմից տրված պարզաբանում

- Տեղեկացնում եմ, որ Չափիչ սարքի տեսակը պետք է լինի թվային: Համապատասխանի ԳՕՍ 6507-90 ստանդարտով սահմանված չափագիտական բնութագրերին: ՀՀ չափագիտության լիազոր մարմնի կողմից լինի տեսակը հաստատված ու ստուգաչափված և թույլատրելի լինի դրա կիրառումը Հայաստանի Հանրապետությունում:

- Տեղեկացնում եմ, որ ըստ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար

ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է»:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0

Հանձնաժողովի նախագահ		Է. Ամիրաղյան
Անդամներ՝		Ա. Այդինյան
		Բ. Արզումանյան
		Ա.Շաբոյան
		Պ.Սարգսյան
Քարտուղար՝		Ս. Խաչատրյան